

անամբը, առաջնորդ հանդիսացան ժամանակակից մատաղ սերնդին նպաստեցին ժողովրդի բարոյական կեանքի զարգացման և կարողացան իրենց բեղմնաւոր դործունեութեամբ մշակել մեր նոր դրականութիւնը և նոր լեզուն: Մինչև այժմ՝ էլ հարիւրաւոր մանուկներ փայլում են այդ համազգային հաստատութեան խնամքը և բարիքները. անում և դաստիարակւում են բարոյապէս և հասարակութեան օգտակար անդամներ դառնում: Այդ պատճառով իսկ իրաւամբ ազգային է այս տունը և ամեն մի կրթութեայ հայի պարտականութիւնը պէտք է լինի զրա մեծ հիմնադրի յիշատակը օրհնել և յարատեւութիւն մտդ լից այն մեծ հիմնարկութեան, որի ազդին տուած բարիքները բոլորիս համար ակներև են և անհերքելի:

Ահա այսօր, ո՛վ սրբանեալ Հայր հայ մարդոց մի ստուար խումբ քո շիրմից հեռու տօնում է ցնծութեան աղաղակներով և կեցցէներով դպրանոցիդ 75 ամեայ փառաւոր դործունեութիւնը և օրհնում մեծ հիմնադրիդ անմահ յիշատակը: Մեզ Ճեմարանի սաներիս է վիճակուած այս բախտը՝ երախտագիտութեան զգացմամբ շուրջ պստիլ քո նուիրական դամբարանին և նոցա կողմից ևս թարգման հանդիսանալով ծաղիկ, փնջերով և անթառամ դափնիներով դարդարել, բուռն զգացմանց հետ մրմունջներ առաքելով բարձրեալ Արարչին՝ պաշտելի հայրապետիդ հոգւոյ անդորրութեան համար:

Դարեր կանցնին, սերունդներ կանհետանան, բայց քո հիմնած դպրանոցը որպէս մի անկործան յուշարձան կանմահացնէ քո վեհ անունը ապագայ սերնդների սրտում և երկար ժամանակ չի անհետանայ հայ ժողովրդի իրանից Հայրենեաց պաշտպան: Սերսէս անմոռանալի հայրապետի անունը:— Յարասե, անխորձ, երկար ծաղիկ օրեր ազգային լուսոյ տաճարիդ, անապթաք, բեղուն դործունեութիւն անուանդ յուշարձանին, և հանդիսաւ սրբանեալ նշխարներիդ:

Այս տարի Ճեմարանի մասնագիտական դասընթացքն աւարտեցին ութ հոգի:

Սոցանից 6-ը ուրարակիր են արդէն և պիտի պատրաստուին վարդապետական կամ քահանայական կոչման համար: Ծորաւարանները Ճեմարանի աւանդութեան համաձայն ամսոյս 10-ին Ս. Լուսաւորչի տօնի օրը հոգեհանդիսա կատարել տուին Ճեմարանի հիմնադիր Գեորգ Դ. Մեծադործի գերեզմանի վերայ և նոցանից մէկը Տ. Սիմէօնեան լեռն երախտագիտական մի ծառ կարգաց Հոգեոր Տիրոջ ներկայութեամբ: Ծորաւարանները ամսոյս 12-ին հ. Տեաչի առաջնորդութեամբ բարդ ունեցան համբուրելու Ծորին Սրբութեան աջը և Հայրապետական օրհնութեան հետ ստացան իրենց մրցանակադրիւր:

ՏԱԺԿԱՀԱՅԻՐ

Վենետիկի Միթիթարեան Միաբանութիւնը 30 սեկտեմբեր 1907 թ. արժողութեամբ գիրքեր նուիրած է Արմաշու Դպրեմանքին, պայմանաւ որ Միաբանութեան անունով որը մը պահուի Արմաշու որբանոցին մէջ:

— 12 Մայիսի Խառն Ժողովը գումարուեցաւ Ղաւաթիոյ Խորհրդարանին մէջ, Ս. Պատրիարք Լօր նախագահութեամբ, Ժողովը բացուելուն պէս Ս. Պատրիարք Լօրը հաղորդեց ինչ ինչ յարարական խնդիրներու մասին հաղորդուած բարձրագոյն հրահանները: Նկատողութեան առնուեցաւ գաւառային կարօտութեանց խնդիրը և եղած զիմուսներէն ոմանց առաջնութիւն տրուելով, անոնց ընդփողմ գործադրութիւնը յանձնուեցաւ Ս. Պատրիարք Լօր, Յետոյ, Ժողովը Օրակարգին անցնելով հաստատեց Այգազեան Տ. Յովսէփ եպիսկոպոսի Եգիպտոսի առաջնորդական ընտրութիւնը, և որոշեց գրել Ռօտոսթոյի Դաւառական Ժողովին՝ որ անոր յաջորդին ընտրութեան ձեռնարկեն: Խառն Ժողովը տեղեկանալով նաև թէ Վանայ այցելու հոգիւ Տ. Ներսէս եպիսկոպոս անձնական տկարութեան պատճառաւ արտօնութիւն խնդրած էր Պոլիս վերադառնալու, և նկատելով որ Ն. Սրբազնութիւնը այնքան օգտակար եղած է նոյն վիճակին, այնտեղ իր

ներկայութիւնը անհրաժեշտ է, որոշեց գրել որ յետագէտ իր մտադրութիւնը:

— Վարագայ Վանուց հոգաբարձութեան դիւանը կը հաղորդէ հետեւեալը. «Գոհութեամբ կը ծանուցնեմ որ՝ Եգիպտոսի մէջ եղած ալ «Որբախընամ Մարմինը», որ ինչպէս նախապէս ծանուցուեցաւ, Եգիպտոսեան Վանեցիներու նախաձեռնութեամբ հիմնուած է, Հաստատութեանս աջակցելու նպատակով բարեհաճած է վեց որբերու պաշտպանութիւնը ևս ստանձնել, որով նոյն մարմինը պաշտպանեալներուն թիւը հասած է 8-ի: Յիշեալ որբերը՝ ամէնէն աւելի անպաշտպաններէն արդէն ընտրուած ու հաստատութեանս մէջ ընդունած ըլլալով, ընդհանուր աշակերտներու թիւը Ժիշտ 100ի հասած է:

— Արսէն վ. Վահուհի որ ժամանակէ մը ի վեր Աւստրիոյ Սուլտան քաղաքը կը գտնուէր, այս անգամ Ամերիկայի Լորենս թեմին կողմէ Հոգեւոր Հովիւ նշանակուած ըլլալով մեկնած է իր նոր պաշտօնատեղին: Սուլտանի մէջ Արսէն վ.-ի հոգեւոր և կրթական գործը կը շարունակէ քահանայ մը, որ Էջմիածնայ մէջ եկեղեցական կարգաց վարժուելով և ձեռնադրուելով վերադարձեր է:

— Բաղէշի վանուց փոխ-վանահայր Եղրաս վ. տեղւոյն վանքերու մասին Պատրիարքարան ղրկած մէկ տեղեկագրին մէջ կըսէ թէ՝ Գոմոց Ս. Աստուածածնայ վանքին մէջ տաճարին դիմացը Շողիկեան ընտանիքին միջոցաւ դպրոց մը շինուեր է, 12 սենեակներով: Այս առթիւ Եղրաս վ. խնդրեր է, որ Ամբրուսի Ս. Յովհաննու վանքը միացնելով Գոմոց վանքին հետ, այս վերջինին մէջ Ազգ. Որբանոց մըն ալ բացուի Պատրիարքարանի նպաստով և ժողովրդեան հանգանակութեամբ:

— Վանայ մէջ Ամերիկացի միսիոնար Տօքզ. Բէյնոլտս, իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է Որբանոցին վրայ, և այս պատաճառաւ իր կողմէ նպաստի բաշխման գործը տկարացած է կը գրեն մեզ, Հիմայ Որբանոցին մէջ կան 600 որբեր, որոնց 350ը մանչ և մնացեալները աղջիկ են: Այս Ամերիկեան Որբանոցէն 90-ի չափ որբեր որդեգրուած են Ամերիկացի և Գերմանացի բարերարներէ: Թրանսփալի պատերազմը մինչև Վան իր աղքատութիւնը ունեցեր է, և որբերու պաշտպաններէն չորսը պատերազմին մէջ մեռած ըլլալով, իրենք ալ Որբանոցէն արտաքսուեր են: Մ. Բէյնոլտս իր հաստատութեան մօտ գտնուող աղբիւրէ մը ջուր բերել տալով, կարեւոր պակաս մը լրացուցեր է: Աղբիւրին վրայ իրաւունք ունեցող թաղեցիներու հետ 41 տարուան պայմանագրութիւն մը կնքուելով, ամէն տարի գոհացուցիչ գումար մը պիտի վճարուի, նոյն հաստատութեան մէջ հիմայ կան 200 ցորեկօթիկ աշակերտներ ալ:

— Պրազիլիոյ (Հարաւային Ամերիկա) Սան

Բալլէ քաղաքին մէջ առեւտրական գործով պարսպող, բաւական բարեկեցիկ վիճակի տէր 3 Հայ եղբայրներու ամէնէն կրտսերը, վերջերս յատկապէս Մարսիլիա երթալով, Եւրոպայի Հայոց Հոգեւոր հովիւ Տ. Գեորգեայի. Իւթիւնեանի ներկայացրել և իր երկու եղբայրներուն, որոնցմէ մէկը 33 և միւսը 38 տարեկան է Հայ աղջիկներու հետ ամուսնանալուն փափաք յայտներ է, կը գրեն Բարիգէ: Սոյն երիտասարդը Տ. Գեորգեայի, խորհրդով և անոր յատուկ յանձնարարականով խնդրագիր մը ղրկած է Պատրիարքարան, որուն մէջ կըսէ թէ՝ օտարներու հետ ամուսնանալով իրենց զաւակները օտարացնելու երկիւղով, կը փափաքին որ պարկեշտ որբուհիներ կամ աղքատ դասակարգէ աղջիկներ ղրկուին, որոնց ճամբու ծախքն ալ պիտի հոգացուի իրենց կողմէ: Այս երիտասարդներուն լուսանկարն ալ ղրկուած ըլլալով Պատրիարքարան, իրենց հետ ամուսնանալ փափաքող աղջիկներու լուսանկարներն ալ պիտի առնուին և փոխադարձ հաւանութենէն յետոյ հարկ եղած բանակցութիւնները պիտի կատարուին:

— Երզնկայի առաջնորդարանէն հետագրաւ նպաստ խնդրուած է Պատրիարքարանէ, Ասկէ առաջ ալ նոյն առաջնորդարանէ նպաստի խնդրանագ համար երեք նամակներ և հեռագիր մը ղրկուած են. սակայն նպաստից ստուկը չէ կարող այդ խնդրանքին գոհացում տալ, վասն զի Երզնկայ քաղաքում մը ուրիշ աւելի կարօտ գաւառներու նիւթապէս այնքան կարօտ չի համարուիր:

— Վանայ կուսակալ Թահիր փաշա Հոգեւոր Հովիւ Տ. Ներսէս Սրբազանի յանձնէր է 100 ոսկիի պետական նպաստ մը, որ կարօտեալներու պիտի տրուի: Տեղւոյն երկրագործական դրամատունն ալ այս օրերս 100 ոսկիի նպաստ մը պիտի բաշխէ:

— 5000 ոսկիի կտակ մը ընելու փափաք յայտնած է հանգուցեալ Բէլէկեան Պօղոս էֆ. Ի ամուսինը Տիկին Սանդուխտ, պայման դնելով որ այդ դրամով ապահով կալուածներ գնուին ազգ. Հիւանդանոցին համար, Այս կտակին վերաբերեալ պաշտօնական գործողութիւնները պիտի կատարուին ի մօտոյ, Կը լսենք նաև թէ յիշեալ տիկինը կը փափաքի Մաքրիգիւղի մէջ աղջկանց վարժարան մը շինել, 5-600 զսկի ծախքով:

— Արեւ. Մամիոյ մայիսի թիւին մէջ Թագւոր փաշայի կտակին նկատմամբ կը գտնենք հետեւեալը:

Ուրախ ենք յատնելու թէ՛ մեր Սրբազան Հօր առ Ասեմ: Տիկին Թագւոր փաշա և Լեոն պէյ որդին ուղղած գրերուն պատասխանը, միանգամայն և կտակին Զմիւռնիոյ վերաբերեալ պարբերութեան պատճէնն հաղորդուած է. որոյ իմաստն է. —

Ա. Ասեմ: Թագւոր փաշա ի կենդանութեան 458,270 ղրշ. ի գումար յատկացուցած է յանուն իւր վաղաժեռիկ Գարուհի դստեր, Բ. Կը կտակէ

որ սոյն գումարը մինչև իւր մահուան օրը եթէ հասած լինի պահանջուած քանակութեան, մի վարժարան հիմնուի ի Ջմիւռնիս նման գերմանական Տիպոնէաներու վարժարանին, ուր պատասպարունքն և կրթութիւնը 30 աղքատիկ աղջկունք, Գ. Կը կաակէ որ՝ եթէ կտակած գումարը մինչև իր մահուան օրը հասած չլինի իր սոյն կամքը կատարելու քանակին, յայնժամ պէտք է հաստատ և ապահով պանքայի մէջ դնել, մինչև որ արգիւնաւոր շահաբերութեամբ իր նպատակը իրագործուի։ Գ. Կտակած է որ վարժարանին հսկողութիւնը կատարուի երկու անձանց ձեռքը, ընտրուած կտակակատարարի և իր որդի Լեւոն պէյի կողմէ։ Երբ սա չափահասութեան տարիքը մտած է։

Արգիւնչպէս յայտնի է, կտակակատարը Վսեմ Թագւոր փաշայ արդէն կնքած է իւր երկրաւոր կեանքը, իսկ Վսեմ Լեւոն պէյ թեմակոխած է չափահասութեան տարիքը։

Վսեմափայլ Տիկին Թագւոր փաշայի և Վսեմ Լեւոն պէյի կողմէ մեր Սրբազան Առաջնորդին հաղորդուած Աղէքսանդրիոյ պանքային հաշուեցուցակէն կիմացուի թէ՛ մինչև 1899 թիւ 31 կտակալ գումարը տոկոսեօք հասած է 7540 անգլ. ոսկոյ, Սրբազան Առաջնորդը ընդունելով իր գրութեանց շնորհալի պատասխանն և պանքայի օրինական հաշուեցուցակը, օրհնութեան գրով շնորհակալութիւն յայտնած է Վսեմ Թիկնոջ և Վսեմ Լեւոն պէյի, որք ի բոլոր սրտէ կը բաղձան սրբութեամբ իրագործել հանգուցեալ Թագւոր փաշայի կտակը։

— Երուսաղէմի Միաբանութիւնը վերջերս ի Գահիրէ 28,000 ոսկիի վաճառած է Ս. Աթոռոյն մէկ ընդարձակ հողը, որով վանքին պարտքերն ամբողջովին վճարուած լինցած են, և Ս. Յակովբեանց Միաբանութիւնը ծանր բեռէ մը բարեբախտապէս ազատած է։

— Ամերիկա բնակող մէկ քանի 2նգուշի աղջայիներ 10 օսմ. ոսկի զրկած են Ս. Պատրիարք Զօր և խնդրած են որ 2նգուշի մէջ վարժարան մը բացուի, խոստանալով յառաջիկային վերջտին պէտք եղած ծախքերը հոգալ։

— Աղթամարայ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Արսէն վարդապետ իր իրաւասութեան տակ զբոնուած գիւղերու կարօտ վիճակը յայտնելով, Պատրիարքարանէն նպաստ խնդրած է, աղքատ գիւղացիներու սերմնոցու բաշխելու համար։

— Նոյնիմաստ ուրիշ գրութիւններ հասած են նաև Բաղէշէ և Տիարպէքիլէ, Կըլսենք թէ Ս. Պատրիարք Կայրը արդէն նպաստի գումարներ շնորհած է վերջին երկու առաջնորդարանները։

— Պատրիարքարանէ 100 ոսկիի գումար մը զրկուեցաւ Տիարպէքիլի առաջն. Տեղապահ Տ. Եղեկիէ վարդապետի, որպէս զի կարօտ գիւղացիներու սերմնոցու բաշխէ։

— Քանի մը տարիներ ալ և ահա գաւառներու մէջ կոչկականներու ահագին թիւ մը պիտի ունենանք, վասն զի ցարդ Պատրիարքարանի կողմէ որ գաւառի որքանոցին որ յանձնարարուեցաւ արհեստի ճիւղ մը հաստատել, իսկոյն տեղեկագրուեցաւ Պատրիարքարան թէ կոչկականութիւն հաստատուած է. ասկէ բնականաբար իրաւունք ունինք հետեցնելու թէ յառաջիկային հարիւրաւոր կոչկականներ պիտի ունենանք։

ԱՆՍՏՐԻՈՅ ԿԵԹՈՒԼԻԿ ՀԱՅՔ.

ԱՅՑ ԼԵՄԲԵՐԳԻ ՀԱՅԵՐԻՆ.

Հայդելբերգի ուսանողական վերջին համաժողովը մի ուշագրաւ նորութիւն ունեցաւ. Լեմբերգից, Գալիցիայի մայրաքաղաքից՝ մի գերմաներէն և ֆրանսերէն գրութիւն ստացուեց, ուր մի խումբ հայ ուսանողներ, որոնց գոյութեան մասին ոչ մի գաղափար չունէինք, յայտնելով իրենց կացութիւնը, — ազգայնութեան մոռանալը, մայրենի լեզուի և եկեղեցու կորուստը, կաթողիկ կղերի ճնշումը և այլն՝ աղաչում են հայ ուսանողներին օգնութեան հասնիլ, սովորեցնել իրենց հայերէն, մեր այդ մեծանուն և փարթամ գաղթականութեանց գէթ վերջին բեկորները փրկելու նպատակով։

Եւրոպայի ամբողջ հայ ուսանողութեան վերայ այս գրութիւնը մեծ տպաւորութիւն թողեց։

Եւ զա հասկանալի է, դարեւով կորած և մոռացուած մի գաղթավայրից յանկարծ միանգամայն անսպասելի կերպով լուում են հայ եղբայրք ձայներ։ Մեր եղբայրների կոչն է լուում կենդանութեան և յարութեան ձայներ են գալիս այնտեղից, ուր մենք ամէն ինչ կորած ու մեռած էինք համարում։ Հասկանալի է, որ այդ կոչը պիտի ընդունուի եր հրճունբով։ Ո՞ր քարտիւղը պիտի չուրախանայ կորած եղբոր գալստեանը...

1899 թ. յունիսի վերջերին՝ ես առ միշտ մնաս բարով ասացի Եւրոպային — յարմարագոյն ծանապարհը, հայրենիք վերագառնալու, ընկնում էր Միւնխենի, Վէննայի և Լեմբերգի վրայով։

Լեմբերգ հասայ ես զիշերը ժամը 10-ին. մի ամբողջ ժամ գնացքը այդտեղ դադար էր առնելու, մինչև յաջորդի գալը, այդ վերջինն էլ շատ անժամանակ պիտի հասնէր Ռուսաց սահմանը, ուստի հետեւելով լեհ ծանօթիս խորհրդին, թողի իրերս կայարանում և ուղեւորուեցայ քաղաքում գիշերելու, մանաւանդ այդ ծանօթս որ մի լեհական ազնուական էր, ծանապարհին անհաւատարի համակրանքով էր խօսում Գալիցիայի հայերի մասին և բնականօրէն շարժում մարդու հարցասիրու-